ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 30 սեպտեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Կ. Բալայանի

Ուսումնասիրելով քաղաքացի Ռիմա Նախշքարյանի անհատական դիմումով
գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Ռիմա Նախշքարյանը 16. 09. 2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ, 233-րդ եւ 234-րդ հոդվածների դրույթների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 6-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

I. Դիմումում նշված՝ օրենսգրքի 231-րդ հոդվածի /նախկին խմբագրությամբ՝ 230-րդ հոդված/ կապակցությամբ դատական կազմն արձանագրում է հետեւյալը.

Հոդվածը կրում է՝ «Վճռաբեկ բողոքի բովանդակությունը» անվանումը եւ կարգավորում է վճռաբեկ բողոքի բովանդակությանն առնչվող իրավահարաբերությունները: Այդ հոդվածի 1-ին մասն ամբողջությամբ քննության առարկա է հանդիսացել սահմանադրական դատարանում եւ վիճարկվող դրույթի վերաբերյալ առկա է ՍԴՈ-690 որոշումը, որով այն ճանաչվել է Սահմանադրությանը համապատասխանող: Հետագայում վիճարկվող դրույթն էական փոփոխություններ չի կրել /«կիրառվել» բառից հետո ավելացել է «եւ դրանց հիմնավորումները» արտահայտությունը/:

ՍԴՈ-765 որոշմամբ 231-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-233 օրենքի 16-րդ հոդվածով օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Վճռաբեկ բողոքն ստորագրում է բողոք ներկայացնող անձը կամ նրա ներկայացուցիչը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Եթե վճռաբեկ բողոքը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա բողոքին կցվում է ներկայացուցչի՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը»:

Այսպիսով, դիմումի հիման վրա գործը՝ 231-րդ հոդվածի մասով, քննության ընդունման ենթակա չէ այն պատճառաբանությամբ, որ այդ հոդվածի առնչությամբ առկա են սահմանադրական դատարանի ՍԴՈ-690, ՍԴՈ-765 որոշումները («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետ):

II. Դիմումում նշված՝ օրենսգրքի 233-րդ հոդվածի /նախկին խմբագրությամբ՝ 231.1. հոդված/ կապակցությամբ դատական կազմը նշում է, որ փվյալ հոդվածը, որն ունի «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերնագիրը եւ կարգավորում է վճռաբեկ բողոքի վերադարձման հետ կապված իրավահարաբերությունները, նախկինում քննության է առնվել ՀՀ սահմանադրական դատարանի կողմից եւ առկա են սահմանադրական դատարանի որոշումներ: Այսպես.

- սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1. հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերի դրույթները /233-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերը եւ 3-րդ մասը/ ճա-

նաչվել են Սահմանադրությանը համապատասխանող եւ հետագայում փոփոխության չեն ենթարկվել:

- ՍԴՈ-754 որոշմամբ 233-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Ներկայումս հիշյալ հոդվածում նման դրույթ առկա չէ:

- ՍԴՈ-765 որոշմամբ 233-րդ հոդվածի 2-րդ մասը մասնակի ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր: Դրույթը հետագայում չի փոփոխվել: Այս նույն որոշմամբ 233-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող /հետագայում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՕ-233 օրենքի 17-րդ հոդվածով 233-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից հանվել է «կամ վճռաբեկ դատարանի սահմանած» բառերը/:

Այսպիսով, դիմումի հիման վրա գործը՝ 233-րդ հոդվածի մասով, քննության ընդունման ենթակա չէ այն հիմնավորմամբ, որ այդ հոդվածի առնչությամբ առկա են սահմանադրական դատարանի ՍԴՈ-690, ՍԴՈ-754, ՍԴՈ-765 որոշումները («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետ):

III. Դիմումում նշված՝ օրենսգրքի 234-րդ հոդվածում /նախկին խմբագրությամբ՝ 231.2.-րդ հոդված/ նախատեսված դրույթը սահմանում է վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հիմքերը:

Նշված դրույթի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 որոշումը, որով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.2-րդ հոդվածի /ներկայիս խմբագրությամբ՝ 234-րդ հոդված/ բոլոր դրույթները քննության առարկա են հանդիսացել եւ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Հետագայում այս հոդվածը նույնպես փոփոխության չի ենթարկվել:

Այսպիսով, դիմումի հիման վրա գործը՝ 234-րդ հոդվածի մասով, քննության ընդունման ենթակա չէ այն հիմնավորմամբ, որ այդ հոդվածի առնչությամբ առկա է սահմանադրական դատարանի ՍԴՈ-690 որոշումը («Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետ):

IV. Բացի դրանից, անհրաժեշտ է նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող

պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Ինչպես վկայում է դիմումի ուսումնասիրությունը, դիմողն իրավաբանորեն չի հիմնավորել, թե իր որ սահմանադրական իրավունքներն են խախտվել խնդրո առարկա դրույթներով, ինչպես նաեւ ներկայացված չէ անմիջական պատճառահետեւանքային կապը վիճարկվող դրույթների եւ դիմողի իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջեւ:

Դատական կազմը գտնում է, որ դիմումը՝ վերոնշյալ դրույթների մասով ակնհայտ անհիմն է, քանի որ դիմողը չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը: Հետեւաբար, առկա է նշված դրույթների մասով դիմումի քննության ընդունումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն մերժելու հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 6-րդ կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

Քաղաքացի Ռիմա Նախշքարյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

30 սեպտեմբերի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-27